Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Տնօրենի տեղակալ ուսումնական գծով՝ մեթոդիստ՝ 1 դրույքային միավոր
2. Դաստիարակ 1,17 դրույքային միավոր

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մեթոդիստի՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալի որակավորման պահանջները՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 20 կրեդիտ:

Դիմող քաղաքացիները թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. հուլիսի 29-ից օգոստոսի 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 17:00-ն:

Մրցույթը կկայանա 2026 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ ՀՈԱԿ-ում, Չարենց 8/1:

Տեղեկությունների համար զանգահարել 094992403 հեռախոսահամարով:

Հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց 8/1:
Էլ. հասցե՝ tiv5garun@mail.ru